

են եւ մանաւանդ Յիսուսեանք: Բողոքելով բողոքեցաք մեք առ արքայ. այլ չեւ է ընկալեալ մեր հրաման յարդարելոյ ատեան հարցափորձից եւ դատաստանի, եւ Աստուծոյ է միայն գիտելի՝ թէ երբ զայն ընկալցուք: Եւ եթէ լինիցի իսկ ատեան դատաստանի՝ խիթամք թէ եւ յայնժամ ոչ գայցէ յերեւան ճշմարտութիւնն. քանզի որ ի Վարչաւայ նստի նուիրակն եւ այլ եկեղեցականք Լատինացւոց եւ առաւել եւս Յիսուսեանք յամենայն զօրութենէ իւրեանց պաշտպանեն անիծեալ եպիսկոպոսին: Չոգաք մեք եւ առ նուիրակն եւ բողոք բարձաք ընդդէմ բռնութեանցս այսօցիկ. այլ նա արար մեզ պատասխանի, թէ չեն կարեւոր իրքն. զի որպէս, ասաց, մկրտութեամբ աւաղանին քաւեցան մեզքն նախկին՝ այսպէս եւ գործք եպիսկոպոսին Թորոսովիչի թողան նմա յօրէն, յորմէ հետէ ընկալաւ նա զմիութիւնն ընդ Ս. Կաթողիկէ եկեղեցւոյն Հռովմայ: Յորժամ խնդրեցաք, զի մեզ, որ քրիստոնեայքս եմք՝ տացի գէթ մին յեկեղեցեացն՝ ոչ հաւանեցաւ ընդ այս խնդիր մեր արքայն եւ ոչ նուիրակն եւ ոչ քահանայք Լատինացւոց, ի ներքս ածելով կանոնս հռովմէականս՝ թէ ամենայն եկեղեցիք հնազանդին եպիսկոպոսին, որպէս իշխանաւորին իւրեանց: Միով ասել բանիւ՝ վարին ընդ մեզ ըստ ամենայնի՝ զոր օրինակ առ աչօք մերովք ընդ եկեղեցւոյն Յունաց վարեցան, որ ի քսան ամաց հետէ ի զուր ճգնի իրաւունս գտանել: Եւ զայս ամենայն առնեն, որպէս զի տկա-